

ՀՀ դիվանագիտության ջանքերը ցեղասպանությունների կանխարգելման ուղղությամբ

Մեծարգո պարոն նախագահող,
Հարգարժան հյուրեր,
Հարգելի գործընկերներ,

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը և այս առումով Հայաստանի դիրքորոշումների ներկայացումն իր զարգացումն է ստացել նաև բազմակողմ դիվանագիտության հարթակում: Հայաստանը նախաձեռնում և հետևողականորեն միջազգային հարթակներում բարձրաձայնում է ցեղասպանությունների կանխարգելման հարցը: Մասնավորապես, տարիներ շարունակ, որպես հիմնական համահեղինակ, Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ներկայացնում է «Ցեղասպանության կանխարգելում» խորագրով բանաձևեր: Գաղտնիք չէ, որ ՄԱԿ-ի համակարգում ներկայացվող բանաձևերը՝ ձևավորելով անդամ երկրների վարքագծի նոր կանոններ, դառնում են միջազգային իրավունքի մշակման գործընթացի կարևոր փուլ և միջպետական հարաբերությունների կարգավորման գործիք:

Այն փաստը, որ այսպիսի մեծ կարևորություն ունեցող թեմայով բանաձևեր ներկայացվում են հենց Հայաստանի կողմից խորհրդանշական է: Լինելով ցեղասպանություն վերապրած ժողովուրդ, դասելով ցեղասպանությունը մարդկության դեմ կատարված մեծագույն ոճրագործություն, Հայաստանն իր բարոյական պարտքն է համարում օգտագործելու միջազգային իրավունքի տարբեր գործիքներ՝ ամրագրելու համար Հայաստանի համար կարևորություն ներկայացնող դրույթներ և թույլ չտալու նման սոսկալի հանցագործության կրկնությունը որևէ պարագայում:

Ցեղասպանության խնդրին վերաբերող առաջին բանաձևը Հայաստանը ներկայացրել է դեռևս 1998 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում: Այն վերաբերել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման 50-ամյակին:

Ընդ որում, այս բանաձևը նույն տարում ներկայացվեց և առանց քվեարկության ընդունվեց նաև ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում: Բանաձևի հիմնական նպատակն էր՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Կոնվենցիայի ընդունման փաստին, ինչպես նաև կոչ անել անդամ երկրներին ապահովել Կոնվենցիայի ուսումնասիրումն ու տարածումը:

Հաջորդիվ ներկայացված չորս բանաձևերը բովանդակային առումով ավելի կատարելագործվեցին և ընդլայնվեցին: Այդ բանաձևերը մինչև 2005 թվականը

ներառյալ աշխատանքային ծրագրի համաձայն ներկայացվեցին երկու տարին մեկ հաջորդականությամբ:

Հետագայում ՄԱԿ-ում կատարված կառուցվածքային վերափոխումների արդյունքում Մարդու իրավունքների հանձնաժողովը վերափոխվեց Մարդու իրավունքների խորհրդի և Հայաստանը 2008 թվականին ներկայացրեց բանաձև արդեն այդ շրջանակում: 2008 թվականին Հայաստանի կողմից ներկայացված բանաձևը զգալի փոփոխության ենթարկվեց, քանի որ այն վերանայում էր կանխարգելման կոնցեպցիան, առաջ քաշելով պետությունների պատասխանատվության հարցը:

Նշեմ, որ նույն տարում Հայաստանի նախաձեռնությամբ ԵԱՀԿ-ում ընդունվեց Նախարարական հռչակագիր նվիրված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 60-ամյակին, որում վերահաստատվում էր կոնվենցիայի դերն ու նշանակությունը ցեղասպանության հանցանքի կանխման ու պատժման հարցում:

Հինգ տարի ընդմիջումից հետո Հայաստանի կողմից հաջորդ բանաձևը ներկայացվել է 2013 թվականին: Այդ բանաձևի ներկայացումը Մարդու իրավունքների խորհրդում չափազանց կարևոր նշանակություն ուներ առաջին հերթին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքային ծրագրի համաձայն բանաձևերը սովորաբար ներկայացվում էին երկու տարին մեկ և, հետևաբար, սա նշանակում էր, որ բանաձևը կրկին անգամ կդրվեր արդեն 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ:

2013 թվականի բանաձևի տեքստը ենթարկվեց զգալի փոփոխությունների, միննույն ժամանակ պահպանելով հարցի վերաբերյալ հիմնական մոտեցումները՝ կանխարգելում, պաշտպանություն և պատժի սահմանում կատարված հանցագործության համար:

Տեքստային նորամուծություններից շատերը զգալիորեն հարստացրեցին և արդիականացրեցին բանաձևը: Դրանց թվում կարելի է նշել ճշմարտության իրավունքի սկզբունքի ներառումը, ինչը ենթադրում է ճշմարտության ներկայացում մարդու իրավունքների զանգվածային խախտումների վերաբերյալ, ցեղասպանության կրթությանը վերաբերող հարցերի խթանում, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակով համագործակցության հաստատում և այլն: Արդյունքում, բանաձևը համահեղինակեցին ՄԱԿ-ի անդամ 61 պետություն:

2015 թվականի բանաձևի տեքստը նախապատրաստելիս Հայաստանն առաջնորդվում էր այն մոտեցմամբ, որ չվտանգելով բանաձևի ընդունումը բարձրաձայնվեն Հայաստանի համար կարևորություն ներկայացնող հարցեր, ապահովվի նախկին տեքստի շարունակականությունը, այդ թվում, վերահաստատվի բանաձևի հիմնական գաղափարը՝ պաշտպանել ազգային, էթնիկ, ռասայական

փոքրամասնություններին ոչնչացման վտանգից: Սա հնարավորություն էր ստեղծում միջազգային հարթակում կրկին անգամ վերահաստատել այն միտքը, որ Հայաստանն աշխարհում ցեղասպանության կանխարգելման հարցերում առաջատար պետություն է, որը խոսում է ժամանակակից աշխարհի համար դեռևս լուծում չստացած մի խնդրի՝ ցեղասպանության վտանգի մասին:

Բանաձևի տեքստի նախապատրաստման ընթացքում Հայաստանը սերտորեն համագործակցել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականի գրասենյակի հետ:

Նման համամարդկային նշանակություն ունեցող թեմաների ներկայացումը ենթադրում է երկրների կողմից լայն աջակցություն, սակայն դա չի նշանակում որ բանակցային գործընթացն առանց խոչնդոտների և դյուրին է եղել: Նշված բանաձևի տեքստի շուրջ հիմնական հակասությունը ՄԱԿ-ի շրջանակներում նոր զարգացում ստացող Ընկերակցային շուրջ էր, որի էությունն այն է, որ երկրների վրա է դրվում իրենց իսկ ժողովրդին ցեղասպանությունից պաշտպանելու պատասխանատվությունը, իսկ այն չապահովելու դեպքում չի բացառվում արտաքին ուժերի միջամտությունը:

Առաջացած հակասությունները հնարավոր եղավ հաղթահարել Հայաստանի պատվիրակության դիվանագիտական ջանքերով, և բանաձևը համահեղինակեցին ՄԱԿ-ի անդամ 72 պետություն, այդ թվում ԵՄ անդամ պետությունները, ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Իսրայելը:

Այս բանաձևի հետևողական ներկայացումը Հայաստանի կողմից մեր երկրի ներդրումն է նաև «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի դրույթների իրականացման, դրա լուսաբանման և տարածման գործում, ամրապնդելով Կոնվենցիայի մեկնաբանության և կիրառման հարցերում հայկական տեսակետները:

Բանաձևի տրամաբանությունն համահունչ է ՀՀ այն դիրքորոշմանը, որ բազմաթիվ փաստերի վրա հիմնված Հայոց ցեղասպանությունն ամբողջովին համապատասխանում է ցեղասպանության հանցակազմին և դրա սահմանմանը, ինչպես այն տրված է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայում, քանզի որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն Հայոց ցեղասպանությունը հիմք հանդիսացավ ոչ միայն այս եզրույթի հաստատման, այլ նաև ոճրի հանցակազմը բնորոշելու համար, ինչն առաջին անգամ միջազգային իրավունքի սահմաններում դասակարգվեց որպես մարդկության դեմ գործած հանցագործություն:

Հիշարժան է այն հանգամանքը, որ բանաձևում հղում է կատարվում Գլխավոր ասամբլեայի 1946 թվականին կայացած առաջին նստաշրջանին ընդունված 96(1) բանաձևին, որում հաստատվում է, որ «ցեղասպանությունը միջազգային իրավունքի տեսակետից հանցագործություն է», շեշտելով, որ այն որպես հանցագործություն

կատարվել է նաև նախկինում: Նշենք նաև, որ նույն միտքն արտահայտվում է նաև Կոնվենցիայի նախաբանում՝ «ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը»: Վերոհիշյալ ձևակերպումներն այն առանցքային հիմնավորումներից են, որոնք հնարավորություն են տալիս պնդելու, որ Հայոց ցեղասպանությունը լիովին համապատասխանում է այն հանցակազմին, որը սահմանվում է Կոնվենցիայով:

Թեև ՄԱԿ-ի թեմատիկ բանաձևերն իրենց ձևաչափով թույլ չեն տալիս անվանական անդրադարձ կատարել կոնկրետ դեպքերին և պետություններին, սակայն իրենց տրամաբանությամբ և լեզվական կառուցվածքով հիմք են դառնում միջազգային իրավունքի շրջանակներում նոր ձևակերպումների համար:

Բանաձևի տեքստի մեջ ընգրկվել է ժխտողականության վերաբերող պարբերություն: Չնայած Թուրքիայի կողմից գործադրված ջանքերին՝ վերացնելու կամ հանելու այն, փաստորեն առաջին անգամ ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից ընդունվեց մի փաստաթուղթ, որը դատապարտում էր ցեղասպանության ժխտումը կամ արդարացումը, ցույց տալով պատճառահետևանքային կապը անպատժելիության և ժխտողականության միջև:

Բանաձևում ընդգրկված շատ այլ կարևոր ձևակերպումների հետ մեկտեղ ուշադրություն են հրավիրում այն պարբերությանը, որի համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ստորագրման օրը՝ դեկտեմբերի 9-ը առաջարկվում էր սահմանել որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Ընդունված ընթացակարգի համաձայն նման միջազգային օր սահմանելու համար Մարդու իրավունքների խորհուրդը պետք է դիմեր ՄԱԿ Գլխավոր ասամբլեային:

ՀՀ դիվանագիտության ջանքերի շնորհիվ, 2015 թվականի սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի կողմից ներկայացված «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր» խորագրով բանաձևը: Բանաձևը համահեղինակեցին ՄԱԿ-ի անդամ 84 պետություն:

Այդ բանաձևը խրախուսում է պետություններին, միջազգային կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանն ու անհատներին նշել միջազգային օրը՝ ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիայի, ցեղասպանության դեմ պայքարի և կանխարգելման հարցում դրա նշանակության բարձրացման ու իրազեկման նպատակով, հանուն ցեղասպանության զոհերի հիշատակի ու հարգանքի:

2018 թվականին լրանում է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 70 ամյակը, և Հայաստանը

որպես հիմնական համահեղինակ կրկին կառաջադրի բանաձև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում:

Հարգելի գործընկերներ,

2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շարքում իր կարևորությամբ և նշանակությամբ առանձնանում է ապրիլի 22-23-ը Երևանում տեղի ունեցած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» առաջին գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումը, որին մասնակցեցին ավելի քան 600 խորհրդարանականներ, քաղաքական գործիչներ, դիվանագետներ, գիտնականներ, ականավոր ցեղասպանագետներ շուրջ հինգ տասնյակ երկրներից:

Ֆորումի նիստերը նախագահում էին Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիզ Մորենո Օկամպոն, միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Ջեֆրի Ռոբերտսոնը, նշանավոր ցեղասպանագետ Ֆրանկ Չոկը:

Ֆորումն իր երկօրյա աշխատանքներում անդրադարձավ այնպիսի թեմաներին, ինչպիսիք են «Մարդկության հանդեպ ոճրագործությունների կանխարգելման միջոցների զարգացումը միջազգային իրավունքում», «Ցեղասպանության հետևանքների վերացման և պատասխանատվության խնդիրները» և «Խորհրդարանականներն ընդդեմ ցեղասպանության»-ը, ինչպես նաև «Եկեղեցիներն ընդդեմ ցեղասպանության հանցագործության. Մարդկային կյանքը՝ Աստծո պարզև» միջեկեղեցական և «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները»:

«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ առաջին համաժողովն ավարտվել է ֆորումի մասնակիցների կողմից **Հռչակագրի** ընդունմամբ, որը *կոչ է անում* միջազգային հանրությանն առավելագույնս աջակցել ցեղասպանության կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանն ու աջակցել դրա համընդհանուր ճանաչմանն ուղղված շարունակական ջանքերին:

2016թ. ապրիլի 23-ին Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումն՝ 2015թ. ապրիլի 22-23-ին Երևանում կայացած առաջին գլոբալ ֆորումի շարունակությունն էր: Այս անգամ ֆորումի նպատակն էր՝ վեր հանել խնդիրների լայն շրջանակը, որոնք վերաբերում են ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների հետևանքով փախստական դարձած անձանց և վերապրածների իրավունքների պաշտպանությանը՝ դրանով իսկ վերածվելով ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված պայքարի կարևոր ձևաչափի:

Ինչպես և առաջին ֆորումին, երկրորդ ֆորումին էլ իրենց մասնակցություն են ցուցաբերել անվանի ցեղասպանագետներ, ինչպիսիք են Էնդրյու Վուլֆորդը, Ֆրենկ Չոկը, Արդարադատության միջազգային դատարանի ad hoc դատավոր Ջո

Վերհովենը և այս ոլորտում հայտնի այլ գիտնականներ, պատմաբաններ, փորձագետներ, ինչպես նաև ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների վերապրած վկաները:

Երկրորդ գլոբալ ֆորումը նույնպես ավարտվել է ֆորումի մասնակիցների կողմից Հռչակագրի ընդունմամբ, որում խոր մտահոգություն է արտահայտվում Մերձավոր Արևելքում և աշխարհի այլ վայրերում լայն տարածում գտած ԻԼԻՊ-ի և այլ ահաբեկչական կազմավորումների կողմից իրագործված վայրագությունների և ցեղասպանական գործողությունների առնչությամբ և *կոչ է արվում* բոլոր երկրներին, խորհրդարաններին, միջազգային կազմակերպություններին, քաղաքացիական հասարակությանը և շահագրգիռ այլ կողմերին համախմբելու ջանքերը ցեղասպանության չարիքի և մարդկության հանդեպ այլ հանցագործությունների դեմ պայքարի նոր հանձնառության ոգու ներքո: Հռչակագրում նշվում է, որ հաջորդ գլոբալ ֆորումի ուշադրության կենտրոնում պետք է լինի կրթության դերի, մեխանիզմների, միջոցների և կարողությունների զարգացումը՝ որպես ատելությունը, անհանդուրժողականությունը և այլատյացությունը վերացնելու կարևորագույն միջոց:

Շնորհակալություն

Աշոտ Հովակիմյան

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ